

Կ ա ռ ծ ի ք

Լուսինե Մինասյանի <<Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերը. համեմատական իրավական վերլուծություն>> **ատենախոսության վերաբերյալ**

Ատենախոսության թեման խիստ արդիական է: Ժամանակակից աշխարհում թվային հեռահաղորդակցության նոր տեխնոլոգիաների կիրառումը, պետական և մասնավոր կառույցների կողմից անձնական տվյալների մշակումը, կիրեռահանցագործությունների աճը, համացանցի օգտատերերի ոչ պատշաճ վարքագիծը, ինչպես նաև պետական մարմինների կողմից ազգային անվտանգության նկատառումներով ձեռնարկվող միջոցառումները հանգեցնում են անձնական տվյալների աննախադեպ աճի: Այս պայմաններում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի տեսական հետազոտությունները ոչ միայն արդիական են, այլև ցանկալի:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ամփոփումից, օգտագործված գրականության ցուցակից և երկու հավելվածից:

Ներածությունում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակները և խնդիրները, օրյեկտն ու առարկան, մեթոդաբանական, տեսական, նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայցվող դրույթները, գիտական և գործնական նշանակությունը:

<<Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ձևավորման խնդիրները>> վերլուծությամբ առաջին գլխում ատենախոսը փորձել է անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունքի համատեքստում բացահայտել անձնական տվյալների պաշտպանության իրավունքի զարգացման պատմական նախադրյալները և պարզել է, որ ՀՀ անձնական տվյալների պաշտպանության իրավական համակարգը պատկանում է իրավունքի մայրցամաքային համակարգին, կամ, ատենախոսի արտահայտությամբ՝ <<Եվրոպական մոդելին>>: Ատենախոսն այս գլխում անձնական

կյանքի անձեռնմխելիության իրավունքի տարրեր է համարում մասնավոր կյանքի, անձնական կյանքի, անձնական տիրույթի և անձնական տվյալների պաշտպանության իրավունքները, փորձում է բացահայտել այդ իրավունքների բնույթը, բովանդակությունը, առանձնահատկությունները և նրանց հարաբերակցությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը ներկայացված է «Անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնախնդիրները <<անձնական տվյալները>> հասկացության բովանդակային խորապատկերում» նվիրված է առավելապես «անձնական տվյալ», ինչպես նաև «տեղեկատվություն», «տվյալ» հասկացությունների վերլուծությանը: Այս գլխում ատենախոսն անդրադարձել է ինչպես Հայաստանի, այնպես էլ արտասահմանյան երկրների և միջազգային կազմակերպությունների անձնական տվյալների պաշտպանության վերաբերյալ իրավական փաստաթղթերում նշված հասկացությունների բնորոշումներին:

Ատենախոսության երրորդ գլուխը ներկայացված է «Անձի անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի երաշխիքները»:
Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի երաշխիքների հիմնախնդիրը բավական բարդ է, բազմանիստ, ունի սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ միջազգային-իրավական, քաղաքական, գաղափարախոսական, տեխնիկական չափումներ: Այնինչ, ատենախոսը հակառակ վերնագրի, այս գլխում քննարկում է բացառապես անձնական տվյալների պաշտպանության իրավունքի իրականացման սահմանների և սահմանափակումների, ինչպես նաև սահմանադրական սկզբունքներին դրանց համապատասխան խնդիրները:

Ատենախոսության վերաբերյալ ներկայացնում եմ հետևյալ նկատառումները և դիտողությունները:

1. Ատենախոսության թեմայի անվանումը չի համապատասխանում բովանդակությանը: Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հիմնահարցերը, նույնիսկ համեմատական իրավական վերլուծության հարթությունում ունեն ընդգրկման շատ ավելի լայն շրջանակ, քան այդ իրավունքի հետ կապված հասկացությունների բովանդակության վերլուծությունն ու ճշգրտումն է, և այդ իրավունքի իրականացման սահմանների ու սահմանափակումների հարցերը:

Անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հիմնահարցերն ընդգրկում են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անձնական տվյալների պաշտպանության նպատակների վերլուծությունը սոցիալ-բովանդակային և իրավական խնդիրների համատեքստում, Հայաստանում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի արդի սպառնալիքները և մարտահրավերները, անձնական տվյալների շրջանառության իրավական կարգավորման թերությունները և բացթողումները, անձնական տվյալների պաշտպանության իրավունքի խախտումների դեմ պայքարի կառուցվածքային բաղադրիչները, այդ թվում՝ իրավական արդյունավետությունը: Թեմայի սպառիչ լուսաբանման համար ցանկալի կլիներ պարզել նաև, թե Հայաստանում կա արդյոք անձնական տվյալների տեղեկատվական արտահոսք, ինչ բնույթ, չափեր և շարժընթաց ունի այն:

Ակնհայտ է, որ անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի հիմնահարցերի ուսումնասիրությունը չի կարող սահմանափակվել սոսկ առանձին հասկացությունների բովանդակային ճշգրտմամբ կամ այդ իրավունքի իրականացման սահմանների ու սահմանափակումների վերլուծությամբ: Պատահական չէ, որ ատենախոսն առաջարկում է փոփոխություններ կարարել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» 2015թ-ի մարտի 18-ի ՀՀ օրենքի միայն 3-րդ հոդվածի 1-ին մասում և 9-րդ հոդվածի 11-րդ մասում, որոնք վերաբերում են նշված օրենքի հիմնական հասկացություններին:

2. Ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացվող դրույթների մի մասն ամենևին պաշտպանության կարիք չունի, մյուս մասի հիմանվորումներն անբավարար են կամ վիճահարույց: Այսպես, ատենախոսի կարծիքով ինքը հիմնավորել է, որ Հայաստանի անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքի համակարգը, այսպես կոչված «Եվրոպական մոդելի» դրսևորումն է:

Ատենախոսը նման եզրակացության է հանգել անգլոսաքսոնական և մայրցամաքային իրավական համակարգում անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ինստիտուտի վերլուծությունների արդյունքում: Սակայն միթե պաշտպանության կարիք ունի այն, որ Հայաստանի իրավական համակարգը դասվում է մայրցամաքային իրավական համակարգի շարքին, հետևաբար, Հայաստանի անձնական տվյալների պաշտպանության իրավունքի ինստիտուտն ունի մայրցամաքային իրավական համակարգի բոլոր բնորոշ գծերը: Ի

դեպ, այստեղ վիճելի է <<Եվրոպական մոդել>> հասկացության օգտագործումը, որովհետև Մեծ Բրիտանիան թեպետ մասամբ գտնվում է Եվրոպայում, բայց ունի եվրոպական մայրցամաքային երկրներից տարբեր իրավական համակարգ: Պաշտպանության կարիք չունի նաև այն դրույթը, որ անձնական տվյալների պաշտպանության իրավունքը սահմանադրական իրավունքի առանձին ինքնուրույն ինստիտուտ է:

3. Ատենախոսը գտնում է նաև, որ բացահայտելով «մասնավոր կյանք», «անձնական կյանք», «անձնական տիրույթ /Privacy/» հասկացությունների շրջանակները, սահմանել է նոր իրավական կատեգորիա, նոր հասկացություն՝ <<Անձնական տիրույթի իրավունք>>, որը պետք է ներմուծվի Հայաստանի օրենսդրության մեջ:

Ժամանակակից անգլերենում Private եզրույթն ունի՝ 1) անհատական, անձնական 2) առանձին անհատի կամ գերադասելի խմբի և ոչ թե յուրաքանչյուրի, հասարակության, բոլորի համար նախատեսված, 3) անկախ, կառավարության կամ պետական ծառայության հետ կապ չունեցող, 4) ոչ պաշտոնական, այլ գործի կամ պաշտոնական դիրքորոշման, հասարակական կյանքի հետ կապ չունեցող, 5) այնպիսի վայր, որտեղ կարելի է գտնվել տեսանելիության, լսելիության և այլոց վերահսկողությունից դուրս, 6) մասնավոր կյանքով ապրող /անձի համար/ նշանակությունը: Համապատասխանաբար, Privacy եզրն ունի գաղտնիք, մեկուսի, մասնավոր կյանքի նշանակությունները:

Հայոց լեզվում Privacy եզրի համարժեքը չկա: Անգլերենում այդ լեզվով նշանակվող երևույթը հայերենում արտահայտվում է մի քանի եզրով, որոնք կազմում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության հասկացությունը: Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի համաձայն, <<մասնավոր>> եզրը նշանակում է նաև՝ 1) առանձին, ոչ ընդհանուր, 2) մեկ անհատի կամ խմբի պատկանող, 3) ոչ հրապարակային, ոչ պաշտոնական 4) ներքին միայն մեկ անձի վերաբորող: <<Անձեռնմխելի>> եզրը նշանակում է՝ 1) այն, ինչին ոչ ոք չի կարող ձեռք տալ՝ փոփոխել, օգտագործել և այլն, 2) ձեռք չտալ, առանց ձեռք տալու:

Ակնհայտ է, որ անգլերեն Privacy և հայերեն <<մասնավոր կյանքի անձեռնմխելիության>> հասկացությունները համարժեք են: Սակայն ատենախոսն

առաջարկում է Privacy հասկացության մեկ ուրիշ թարգմանական համարժեք՝ «անձնական տիրույթ» հասկացությունը, որի եզրին բովանդակային շեշտադրումներն զգալիորեն զիջում են «մասնավոր կյանքի անձեռնմխելիություն» հասկացության եզրերին: Բավական է ասել, որ «անձնական տիրույթ» հասկացության բաղադրիչներից մեկը՝ «տիրույթ» եզրը ոչ մի առընչություն չունի Privacy եզրի նշանակությունների հետ: Ավելին, ատենախոսը Privacy հասկացության իր թարգմանական համարժեք՝ «անձնական տիրույթ» հասկացությունը հայտարարում է նոր իրավական կատեգորիա: Բայց չէ որ այդ Privacy-ն արդեն վաղուց անգլո-ամերիկյան իրավական համակարգերի իրավական կատեգորիա է, իսկ նրա համարժեքը «մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը»՝ հայկական իրավական համակարգի կատեգորիա: Տարբեր եզրերի ստուգաբանական և լեզվաբանական վերլուծությունների համառ փորձերը տպավորություն են ստեղծում, որ ատենախոսը զիտակցաբար, թե անգիտակցաբար, ամեն կերպ ձգտում է Հայաստանում արմատավորել անգլերեն լեզվամտածողություն, ինչն անընդունելի է:

4. Վիճելի է նաև ատենախոսության այն դրույթը, որ ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 4-րդ մասում պետք է փոփոխություն կատարել և սահմանափակել ոչ թե անձնական տվյալներին ծանոթանալու, այլ, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը: Այս դրույթն արտածվել է ատենախոսի այն թյուր պատկերացումից, որ անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը անձնական տվյալների մշակման մաս է: Բայց, ասենք, որ անձնական տվյալն ուղղելու պահանջ ներկայացնելու իրավունքը նույնը չէ, ինչ անձնական տվյալն ուղղելը: Դա նշանակում է, որ անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը չի նույնանում այդ տվյալների մշակման գործողությունների հետ, այսինքն՝ անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը չի կարող նրանց մշակման մասը լինել: Բայց այդ, անձնական տվյալներին ծանոթանալու իրավունքը անձնական տվյալների պաշտպանության ինստիտուտի միջուկն է, որից ածանցված են այդ ինստիտուտի մնացած բոլոր իրավունքները:

5. Ատենախոսությունը լուրջ խմբագրման կարիք ունի: Օրինակ՝ ինչ է նշանակում, որ Սահմանադրությունը որդեգրել է օրենքի որակյալ վերապահման տեխնիկան /էջ 101/:

Չնայած ներկայացված դիտողություններին, ատենախոսությունը հաջողությամբ պաշտպանելու դեպքում ատենախոս Լուսինե Մինասյանին կարող է շնորհվել իր հայցած իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

ՀՀ ԲՈԿ-ի իրավագիտության 041 մասնագիտական խորհրդի անդամ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Handwritten signature

Հ. Մ. Ստեփանյան

Հ. Մ. Ստեփանյանի ստորագրությունը հաստատում էմ ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական քարտուղար, փիլ. գիտ. թեկնածու, դոցենտ



Ա.Ռ. Ջիջյան